ՀՀ Կոտայքի մարզպետի հանրային հաշվետվությունը

ՀՀ Կոտայքի մարզում 2017 թվականին իրականացված բարեփոխումների, ներդրումային ծրագրերի, միջոցառումների և գերակա խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների, ինչպես նաև 2018 թվականի համար նախատեսված միջոցառումների ծրագրերի և ակնկալվող արդյունքների վերաբերյալ

Բովանդակություն

ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 2

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 2

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ... 3

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 3

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 4

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 5

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 6

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ 7

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 7

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ 9

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ 10

I. Տեղական ինքնակառավարում և համայնքային ծառայություն 10
II. Վարչական հսկողություն 10
III. Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառ 10

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ 11

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ 11

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 12

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 14

ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 250700 մարդ, որը հանրապետության բնակչության 8.4%-ն է, որից՝ 136700-ը քաղաքաբնակներ են (54.5%), 114000-ը՝ գյուղաբնակներ (45.5%):

Մարզի տարածքը կազմում է 2086 քառակուսի կիլոմետր, որը հանրապետության տարածքի շուրջ 7 %-ն է:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

2017թ. մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 162.1 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 136.3 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն ավելացել են 18.9%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների ավելացումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համեմատ էլեկտրաէներգիայի արտադրության և մշակող արդյունաբերության ցուցանիշների ավելացմամբ: Այսպես, 2017թ. էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը կազմել է 60.3 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 3.6 մլրդ. դրամով կամ 6.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 97.8 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 22.2 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 29.4%: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում սննդամթերքի (10.9%), խմիչքների (63.3%), դեղագործական արտադրանքի (54.6%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (31.5%), հիմնային մետաղների (4.1%) արտադրության ճյուղերում:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 16.7%-ով կամ իրացվել է 159.5 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 136.7 մլրդ. դրամի դիմաց:

2017թ. արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 115.7 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 43.8 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 23.7 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 20.1 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 44.6 %-ով: 2017թ. մարզում միջին ամսական աշխատավարձը 2016 թվականի համեմատ աճել է 2.7%-ով՝ կազմելով 158794 դրամ:

Բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 105.2 մլրդ. դրամ նախորդ տարվա 101.8 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 3.3% :

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջությունը կարևոր տեղ է զբաղեցնում Կոտայքի մարզի տնտեսության մեջ: Մարզի զբոսաշրջության հիմնական կենտրոններն են՝ Ծաղկաձորի, Աղավնաձորի, Մարմարիկի, Հանքավանի, Աղվերանի, Արզնիի հանգստյան գոտիները, Գառնի, Գեղարդ, Բջնի պատմամշակութային վայրերը: Մարզում գործում են ավելի քան 80 հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրներ, զբոսաշրջության համար առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Ընդ որում, տարեցտարի ընդլայնվում և նորացվում է հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրների ցանցը:

2017թ. ընթացքում մարզ այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է ավելի քան 490000 մարդ նախորդ տարվա 420000-ի դիմաց կամ աճը կազմել է 16.7%:

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում գրանցվել է ներդրումային ծրագրերի նկատելի աճ: 2017 թվականին մարզում կատարվել են շուրջ 75 մլրդ դրամի ներդրումներ, որից մասնավոր միջոցներով՝ շուրջ 60 մլրդ դրամի չափով. արդյունքում ստեղծվել է ավելի քան 2000 նոր աշխատատեղ: Ընդ որում, մասնավոր միջոցներով ներդրումներից 25.5 մլրդ. դրամ ներդրվել է արդյունաբերության, 5.0 մլրդ. դրամ՝ գյուղատնտեսության (ինտենսիվ այգիներ, կոոպերատիվ, գիտահետազոտական կենտրոն), 2.0 մլրդ. դրամ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, 10.9 մլրդ. դրամ՝ զբոսաշրջության (հյուրանոցներ, հանգստի գոտիներ), 500.0 մլն. դրամ՝ էներգետիկայի ոլորտներում (արևային կայաններ, էներգախնայողական ծրագրեր), 6.2 մլրդ. դրամ՝ առևտրի և սպասարկման օբյեկտների կառուցման, ինչպես նաև 9.9 մլրդ. դրամ՝ բնակարանաշինության համար:

Մարզում նախատեսված մասնավոր ներդրումների ծավալը 2018 թվականին կկազմի 66.0 մլրդ. դրամ, որը 2017թ. համեմատ կավելանա 10 %-ով: Ընդ որում 31.0 մլրդ. դրամ կներդրվի արդյունաբերության, 5.2 մլրդ. դրամ՝ գյուղատնտեսության, 6.4 մլրդ. դրամ՝ զբոսաշրջության, 1.2 մլրդ. դրամ՝ էներգետիկայի ոլորտներում, 12.0 մլրդ. դրամ՝ ՓՄՁ հատվածում, ինչպես նաև 10.2 մլրդ. դրամ՝ առևտրի և սպասարկման օբյեկտների կառուցման համար: Արդյունքում 2018թ. կստեղծվի շուրջ 2100 աշխատատեղ:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզի 2018թ. գործունեության ծրագիրը կազմվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 29-Ն արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ Կոտայքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության հիման վրա, որը ներառում է մարզի զարգացման ռազմավարական նպատակները և հիմնական գերակայությունները:

Ռազմավարական նպատակներն են.

1. մարզի տնտեսական աճի ապահովում,
2. համայնքների համաչափ զարգացում,
3. տարածքային և տեղական կառավարման համակարգերի կատարելագործում:

Հիմնական գերակայություններն են.

Արդյունաբերության զարգացում,
Գյուղատնտեսության զարգացում և արդիականացում,
Զբոսաշրջության զարգացում:

Կոտայքի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրի իրագործման նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվել են 86.7 մլրդ. դրամ, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներ՝ 16.5 մլրդ. դրամ, համայնքային ներդրումներ՝ 853.6 մլն. դրամ, մասնավոր ներդրումներ՝ 66.0 մլրդ. դրամ և միջազգային ու դոնոր կազմակերպությունների միջոցներ՝ 3.3 մլրդ. դրամ:

2018թ. նախատեսված ներդրումները՝ ըստ ոլորտների.

1. Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված - 53.2 մլրդ. դրամ (ձեռնարկությունների, արտադրամասերի, առևտրի և սպասարկման օբյեկտների, ՓՄՁ-ների, ջերմոցային տնտեսությունների հիմնում և ընդլայնում),

2. Զբոսաշրջություն - 6.4 մլրդ. դրամ (հանգստի գոտիների, հյուրանոցային և ռեստորանային համալիրների կառուցում, ընդլայնում),

3. Գյուղատնտեսություն - 5.9 մլրդ. դրամ (ինտենսիվ այգիների, սառնարանային, տոհմային տնտեսությունների, սպանդանոցների, կոոպերատիվների հիմնում, ոռոգման ջրագծերի կառուցում),

4. Բնապահպանություն - 2.7 մլրդ. դրամ (կոշտ թափոնների կառավարման ծրագրի, աղբավարերի փակման աշխատանքների, բնապահպանական միջոցառումների իրականացում),

5. Կրթություն - 6.3 մլրդ. դրամ (նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում, կրթական ծառայություններ),

6. Մշակույթ և սպորտ - 495.3 մլն. դրամ (մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգում),
7. Առողջապահություն- 2.8 մլրդ. դրամ (առողջապահական ծառայություններ),
8. Սոցիալական պաշտպանություն - 3.7 մլրդ. դրամ (զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային պայմանների բարելավում, համալիր սոցիալական ծառայությունների շենքի վերանորոգում, նպաստների հատկացում),
9. Ճանապարհաշինություն - 2.4 մլրդ. դրամ (հանրապետական, մարզային և համայնքային ճանապարհների հիմնանորոգում),
10. Ջրամատակարարում և ջրահեռացում - 467.0 մլն. դրամ (համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում),
11. Գազիֆիկացում - 524.7 մլն. դրամ,
12. Էներգետիկա- 1.7 մլրդ. դրամ (արևային կայանների կառուցում, էլեկտրական ցանցերի վերակառուցում),
13. Քաղաքաշինություն - 183.2 մլն. դրամ (բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում, փողոցների լուսավորության անցկացում, խաղահրապարակների կառուցում),
14. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն -11.0 մլն. դրամ (հեղեղատարների մաքրման և նորոգման աշխատանքներ):

<u>ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ</u>

Կոտայքի մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող հրատապ ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից 2017 թվականին հատկացվել է 549.7 մլն դրամ: Այս միջոցներն ուղղվել են մարզի 18 համայնքներում առավել հրատապ խնդիրների լուծմանը և ներկա պահին իրականացված են համապատասխան շինարարական աշխատանքներ (առողջապահական-1օբյեկտ՝ 42.4 մլն դրամ, կրթական-3՝ 41.6 մլն դրամ, մշակութային-4՝ 68.2 մլն դրամ, թվով 10 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման-2 ծրագիր 48.8 մլն դրամ, փողոցային լուսավորության անցկացման-2 ծրագիր՝ 12.5 մլն դրամ, բարձրահարկ շենքերի թվով 39 վերելակների վերանորոգման 89.5 մլն դրամ, արտաքին ջրահեռացման համակարգի կառուցման 29.6 մլն դրամ, գազիֆիկացման -2 ծրագիր 2700 գծ/մ երկարությամբ 21.1 մլն դրամ և ճանապարհաշինարարական - 2 օբյեկտներ 27.5 մլն դրամ արժողությամբ):

Այս գործընթացի մրցույթների արդյունքում տնտեսվել է շուրջ 168.5 մլն դրամ, որը վերադարձվել է պետական բյուջե:

Մարզի 30 համայնքների բյուջեների հաշվին իրականացվել են 954.5 մլն դրամի՝ 98 կապիտալ շինարարության ծրագրեր:

Պետական բյուջեի և վարկային միջոցների հաշվին տարբեր պատվիրատուների կողմից իրականացվել են թվով 20 ծրագրեր՝ 7 մլրդ 714 մլն դրամի չափով:

Մասնավոր հատվածում (սեփականատերերի և իրավաբանական անձանց միջոցներով) իրականացվել են 34 մլրդ 656 մլն դրամի շինարարական աշխատանքներ, որից <<Կոտայք>> ՋՕԸ-ի կողմից ջրագծերի վերանորոգման համար ծախսվել է 160 մլն դրամ, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից գազիֆիկացման համակարգի վերանորոգման համար 527 մլն դրամ, <<ՀԷՑ>> ՓԲԸ-ի կողմից 700 մլն դրամ, <<Վեոլիա ջուր>> ՓԲԸ-ի կողմից ջրագծերի վերանորոգման համար 8 մլն դրամ:

<<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում պետական բյուջեի միջոցներով Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ 2017 թվականին մշակվել են 9 համայնքների աղբավայրերի փակման և մաքրման նախագծանախահաշվային փաստաթղթերը և 2018 թվականին նախատեսվում է իրականցնել 10 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ 2017 թվականին տարբեր ծրագրերով և տարբեր ոլորտներում Կոտայքի մարզում իրականացվել են 43.7 մլրդ դրամի շինարարություն:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2017 թվականին մարզում ճանապարհաշինության բնագավառում տարբեր ծրագրերով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել է 7 միլիարդ 579 միլիոն դրամի աշխատանքներ, այդ թվում՝

Պետական բյուջեով.

- Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների պահպանություն- 489.0 մլն դրամ
-Մարզային նշանակության ճանապարհների պահպանություն -106.4 մլն դրամ
-Առինջ համայնքի փողոցների ասֆալտապատում (հրատապ ծրագրով) - 13.9 մլն դրամ
-Նոր Երզնկա համայնքի փողոցների ասֆալտապատում (հրատապ ծրագրով) - 13.6 մլն դրամ
-Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան ճանապարհի 1-ին կմ վթարված կամրջի վերանորոգում – 51.0 մլն դրամ
-Երևան-Սևան-Իջևան մայրուղու 28 կմ հատվածի վերանորոգում – 2.8 մլրդ դրամ
-Երևան-Սևան-Իջևան մայրուղու 43 կմ- ի վթարված կամրջի հիմնանորոգում – 70.0 մլն դրամ

<<Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում>> վարկային ծրագրով.(Համաշխարային բանկ)

- Հ1-Հրազդան-Հ55 (Հրազդանի կենտրոնական ճանապարհ) 3կմ հատվածի հիմնանորոգում - 905.0 մլն դրամ
-Հ6-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան ավտոճանապարհի 13 կմ հատվածի հիմանորոգում – 2.6 մլրդ դրամ:

Համայնքային բյուջեներով իրականացված փողոցների և ճանապարհների վերանորոգման աշխատանքներ - 531.0 մլն դրամ

2018 թվականին պետական բյուջեով մարզում նախատեսվել է իրականացնել 2 միլիարդ 369 միլիոն դրամի աշխատանքներ որից՝

- Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների պահպանություն- 489.0 մլն դրամ
- Մարզային նշանակության ճանապարհների պահպանություն - 124.0 մլն դրամ
- Աբովյան-Եղվարդ-Աշտարակ ավտոճանապարհի Հրազդան գետի վրայի կամրջի պահպանում և շահագործում – 15.8 մլն դրամ
- Կապուտան համայնքի՝ դեպի եկեղեցի տանող փողոցների ասֆալտապատման և մյուս փողոցների ասֆալտի փոսային վերանորոգման աշխատանքներ – 36.4 մլն դրամ
- Երևան - Սևան-Իջևան մայրուղու 6 կմ հատվածի վերանորոգում- 800.0 մլն դրամ:
- Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան ճանապարհի 2 կմ հատվածի հիմնանորոգում – 200.0 մլն դրամ:
- Երևան–Գառնի-Գեղարդ ճանապարհի՝ Ողջաբերդ համայնքի վարչական տարածքում հենապատի վերականգնում – 20.0 մլն դրամ:
- Հրազդանի տրանսպորտային հանգույց - Ծաղկաձորի մարզահամալիր ավտոճանապարհի սողանքային հատվածի վերականգնում – 48.0 մլն դրամ:
- Երևան-Եղվարդ-Արագյուղ- Հարթավան-Մ3 ավտոճանապարհի 5.1 կմ հատվածի հիմնանորոգում – 258.0 մլն դրամ:
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում – 377.8 մլն դրամ

Տրանսպորտի բնագավառում մարզպետարանի կողմից կազմակերպվել են ներմարզային 36 երթուղիներ, իսկ մարզի 3 քաղաքներում (Հրազդան, Աբովյան, Եղվարդ) գործում են ներքաղաքային 6 երթուղիներ: Մարզի բնակավայրերը այլ մարզերի հետ կապվում են գործող 17 միջմարզային երթուղիների միջոցով:

Կանոնավոր հասարակական տրանսպորտով չապահովված մարզի 4 համայնքներից 2-ի համար 2017թվականին տրվել է համապատասխան լուծում, իսկ մյուս 2 համայնքները նախատեսվել է տրանսպորտով ապահովել 2018 թվականի 1-ին կիսամյակում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 90 հանրակրթական ուսումնական հաստատություններ.

59-ը՝ միջնակարգ, 30-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/

ԿԳ նախարարության ենթակայության 12 հանրակրթական ուսումնական հաստատություններ.

11 ավագ դպրոց, 1 կրթահամալիր /Աբովյանի կրթահամալիր /

6 պետական քոլեջ, 5 արհեստագործական ուսումնարան

1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/:

ՀՀ կառավարության որոշմամբ Զովաշենի հիմնական դպրոցը միացվել է Հատիսի միջնակարգ դպրոցին: Արդյունքում տնտեսվել է շուրջ 19 մլն. դրամ:

2017-2018 ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում սովորում են 32247 աշակերտներ, իսկ առաջին դասարան են հաճախում 3788 աշակերտ: Ավագ դպրոցներում սովորում են 3110 աշակերտներ: Ընդհանուր 35357 աշակերտ:

2018-2019 ուսումնական տարում նախատեսվում է, որ առաջին դասարան կհաճախեն 3950 աշակերտներ:

2017-2018 ուսումնական տարում 9-րդ դասարանը (հիմնական դպրոցը) կավարտեն 3050, իսկ 12-րդ դասարանը՝ 750 շրջանավարտներ:

Մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատողների թիվը կազմում է 4919 *(մարզային ենթակայության դպրոցներում – 4300)*, որից շուրջ 3000-ը ուսուցիչներ են:

Միջին աշխատավարձը կազմում է 124150 դրամ: ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 15,6 դասաժամ: Նոր ուսումնական տարում ծանրաբեռնվածությունը մի փոքր կբարձրանա և կկազմի շուրջ 16 ժամ /օտար լեզուների կիսվող դասաժամերի հաշվին /: Միջին դրույքաչափը /22 դասաժամ / մարզում կազմել է 123 հազար դրամ: 2017 թվականին որակավորման տարակարգ է ստացել 47 ուսուցիչ, որից 3-ը երկրորդ կարգի տարակարգ:

Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը կազմում է 1:11,8-ի, իսկ դասարանի միջին խտությունը ՝ 21,5 աշակերտ:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգված են 38-ը, մասնակի ՝ 26-ը, իսկ մնացած 26-ը վերանորոգման կարիք ունեն:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 90 դպրոցներից 75-ը, իսկ 15-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով / Կաթնաղբյուրի հիմնական դպրոցը բարերարների աջակցությամբ ջեռուցվել է /:

Մարզում գործում են 54 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 25-ը հիմնովին վերանորոգված են:

2017-2018 ուսումնական տարում ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով մարզի 39 դպրոցներին ավելացել է ևս 8 դպրոց (ընդ. 8182 աշակերտ), որոնց տարրական դասարանների աշակերտներն ապահովվել են ամենօրյա տաք սննդով:

2018 թվականին նախատեսվում է անցկացնել ևս շուրջ 380 ուսուցիչների հերթական նախաատեստացիոն վերապատրաստումներ:

Առարկայական օլիմպիադաների մասնակցող աշակերտների թիվը կազմում է 5828:

Իբրև առաջնային խնդիր, անհրաժեշտ է միջոցներ ներդնել դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման և նյութատեխնիկական բազաների համալրման համար:

Նոր Արտամետի դպրոցում մարզպետարանի աջակցությամբ և բարեգործական հիմնադրամի համաֆինանսավորմամբ իրականացվելու են գազաֆիկացման և ջեռուցման նոր համակարգի կառուցման աշխատանքներ:

Մարզպետարանի աջակցությամբ Արտավազի դպրոցում իրականացվելու է սան.հանգույցների վերանորոգում:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Մարզում գործում են 23 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 5 թանգարաններ, 1 թատրոն, 2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 67 գրադարաններ, 52 մշակույթի տներ և ակումբներ, 1 պատկերասրահ, 2 երաժշտական և 1 գեղարվեստի ստուդիաներ:

Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են *4178* աշակերտներ, աշխատում են *471* մանկավարժներ:

<<Ազգային, լարային և փողային նվագարանների ուսուցման գծով ուսման վարձավճարի փոխհատուցման>> պետական ծրագրի իրականացման շրջանակներում մարզի 15 դպրոցներ *253* աշակերտի ուսուցման համար 2018 թվականին ստանալու են *59035.9* մլն. դրամ:

Աշխատանքներ են իրականացվելու մարզի տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց պահպանական գոտիների՝ ՀՀ օրենքով նախատեսված պահանջների վերահսկման ուղղությամբ: 2018 թվականին Սոլակ համայնքի Մայրավանքի վերականգնման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 15000.0 մլն. դրամ: Նուռնուսի 13-րդ դարի եկեղեցու նախագծային ու չափագրման համար տրամադրվել է 7000.0 մլն դրամ:

Մարզում գործում են 14 մանկապատանեկան մարզադպրոցներ, որոնցից 2-ը մարզային ենթակայության, 2-ը՝ <<Սևան գյուղական մարզական ընկերության>>, 6-ը՝ համայնքային և 4-ը՝ հանրապետական ենթակայության: Մարզադպրոցներում գործում են խմբակներ հունահռոմեական, ազատ ոճի ըմբշամարտ, բռնցքամարտ, ձյուդո, սամբո, ծանրամարտ, դահուկային սպորտ, շախմատ, ֆուտբոլ, հանդբոլ, արևելյան մարտարվեստ մարզաձևերից: Մարզադպրոցներում և մարզական ակումբներում աշխատում են *134* մարզիչներ, պարապող սաների թիվը 5520 է:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզում գործում են 40 բուժհաստատություններ՝ որոնցից 35 մարզպետարանի ենթակայության են, 5 համայնքային ենթակայության (<<Մեղրաձորի ԲԱ>> ՀՈԱԿ, <<Լեռնանիստի ԲԱ>> ՀՈԱԿ, <<Առինջի ԲԱ>> ՀՈԱԿ, <<Բուժականի ԲԱ>> ՀՈԱԿ, <<Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա>> ՊՓԲԸ): Գործում են նաև 2 ընտանեկան բժշկության կենտրոններ՝ <<Մարգարիտ ԱԱՊԿ>> ՍՊԸ, <<Կարդիոմեդ ԸԲԿ>> ՍՊԸ:

Մարզպետարանի ենթակայության բժշկական հաստատություններ.

4 բժշկական կենտրոններ /Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Նաիրի/
1 ծննդատուն /Աբովյան/
1 մարզային արյան բանկ /Հրազդան/
1 պոլիկլինիկա /Նոր Հաճն/
2 առողջության կենտրոն /Գառնի, Արգել/
26 առողջության առաջնային պահպանման կենտրոններ և բժշկական ամբուլատորիաներ

Մարզում գործում են մասնավոր բժշկական հաստատություններ՝ <<Էմբրիոն ԲԿ >> ՍՊԸ, <<Յունիմեդ ԲԿ>> ՍՊԸ, <<ԼայֆՄեդ>> ԲԿ, <<Սուրբ Մարիամ>> Աբովյանի ԲԿ, <<Արզնի էսթետիկա պլաստիկ վիրաբուժության կենտրոն և ՍՊԱ>>, նաև շուրջ 100 դեղատուն և 70 ստոմատոլոգիական կաբինետներ:

Մարզի մահճակալային ֆոնդը 253 է:

Թերապևտիկ պրոֆիլի՝ 73,
Վիրաբուժական՝ 58,
Ինֆեկցիոն՝ 22,
Մանկաբարձագինեկոլոգիական՝ 94,
Վերակենդանացման՝ 6:

Մահճակալային տարեկան զբաղվածությունը շուրջ 77%, մահճակալ/օր 8.8՝

Հիվանդ/բժիշկ տարեկան ցուցանիշ՝ 10000 բնակչին – 21 բժիշկ

2017թ. գլոբալ բյուջեն կազմում է 2 մլրդ 788մլն. դրամ՝

որից ամբուլատոր ծառայության գծով 1 մլրդ 863 մլն. դրամ,

հիվանդանոցային ծառայության գծով 925 մլն. դրամ:

2017թ. մարզի բժշկական կազմակերպություններում վճարովի ծառայության և այլ մուտքերը կազմել են 376.087.4 մլն դրամ՝ (2016թ. 331 մլն.դրամ): 2018 թվականի ընթացքում նախատեսվում է վճարովի ծառայություններից և այլ մուտքերից ստացված գումարի չափը հասցնել մինչև 450 մլն.դրամի:

Մարզի բժշկական կազմակերպություններում աշխատում են 1649 անձ.

- բժիշկներ 399
- բուժքույրեր 801
- կրտսեր բուժաշխատող 164
- վարչատնտեսական 285

Կոտայքի մարզի դիսպանսեր հաշվառված հիվանդներին տրամադրվել է 148.5 մլն դրամի դեղորայք (հումանիտար և կենտրոնացված):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բժշկական կազմակերպությունները *դեբետորական և կրեդիտորական պարտքեր չունեն*:

Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2016 թվականին <<Քաղսիի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի շենքի կառուցման համար հատկացվել է 65.5 մլն դրամ, որից 59.5 մլն դրամը տրամադրվել է հրատապ ծրագրի շրջանակներում, 3 մլն 100 հազ դրամ տրամադրել է Քաղսիի համայքապետարանը, իսկ 2 մլն 900 հազ դրամ ամերիկահայ "Friends of Armenia"-<<Հայրենիք>> միությունը: Կազմակերպությունը 2017 թվականին հանձնվել է շահագործման:

2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին՝ հրատապ ծրագրի շրջանակներում, <<Կ. Խաչատրյանի անվան Գառնիի ԱԿ>> ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգման համար հատկացվել է 45.5 մլն դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

	2016թ.	2017թ.	դինամիկան
Նպաստառու ընտանիքներ -	9459	9022	-437
Կենսաթոշակառուներ -	40830	40855	25
Գործազուրկներ -	8491	8287	-204
Հաշմանդամներ-	14868	14725	-143

2017թ. ընթացքում մարզի 4 սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում հաշվառվել են 11850 ընտանիքներ, որից նպաստառու են 9022 ընտանիքներ: Հասցեականության բարձրացմանն ուղղված աշխատանքների և տնային այցելությունների հետևանքով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստառու ընտանիքների թիվը 437-ով նվազել է: Սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդների առաջարկությամբ չորս եռամսյակներում հրատապ դրամական օգնություն է տրամադրվել 1926 ընտանիքի, որոնց կարիքավորության միավորը 30.00-ից ցածր է եղել:

Նպաստառու ընտանիքների թվի հաշվարկով աղքատության մակարդակը մարզում կազմում է շուրջ 21%, սակայն վիճակագրական տվյալներով աղքատության մակարդակը հասնում է մինչև 35 %, որից ծայրահեղ աղքատ են համարվում 2.5 %:

ԽՍՀՄ բանկերում ունեցած ավանդների փոխհատուցում է տրամադրվում մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը ծնված անձանց և հաշմանդամ դարձած ազատամարտիկներին ու զինծառայողներին: Տարեսկզբից մինչև այժմ 267 ընտանիքի տրամադրվել է ավանդների փոխհատուցման գումար շուրջ 47.1 մլն.դրամ:

Ներկայումս իրականացվում է նաև մինչև 1932թ. դեկտեմբերի 31-ը ծնված անձանց ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով դիմումների հաշվառման գործընթացը:

2017 թվականի ՀՀ պետական բյուջեով նպաստի համար նախատեսված գումարի չափը կազմել է 3 մլրդ 581 մլն դրամ, որից 13 մլն դրամը միանվագ դրամական օգնության համար:

2018 թվականի ՀՀ պետական բյուջեով նպաստի համար նախատեսված գումարի չափը կազմում է 3 մլրդ 590 մլն դրամ, որից 13 մլն դրամը միանվագ դրամական օգնության համար:

2017թվականի ընթացքում զբաղվածության տարածքային 4 կենտրոններում գրանցվել է 8287 գործազուրկ /6.3%/, որից 5402-ը կանայք: Նախորդ տարվա հետ համեմատած զբաղվածության կենտրոններում գրանցվել են 204-ով պակաս գործազուրկներ: Ամբողջ տարվա ընթացքում աշխատանքի են տեղավորվել 1146 մարդ, որից 683 կանայք:

Տնտեսապես ակտիվ բնակչությունը մարզում հաշվարկվում է շուրջ 125000 մարդ, չգրանցված գործազրկությունը կազմում է 23 % /28700մարդ/:

2003-2017թ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի զոհված և հաշմանդամ դարձած 234 անապահով զինծառայողների ընտանիքներ: Դեռևս բնակարանի բարելավման կարիք ունեն 217՝ զոհված/78/ ու վիրավոր/139/ ազատամարտիկների ընտանիքներ: ՀՀ Նախագահի հանձնարարականի համաձայն մարզի զոհված և 1-ին խմբի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներ /15 ընտանիք/ առաջնահերթ կարգով պետք է ապահովվեն բնակարաններով: Դեկտեմբերի 29-ի դրությամբ 7 ընտանիքի տրամադրվել է ԲԳՎ /բնակարանի գնման վկայագիր/:

2003թ. օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայության կողմից հաշվառված առաջնահերթ բնակարանի կարիք ունեցողների թիվը – 551 փախստական ընտանիք էին, որոնք ընդգրկվել են <<Բնակարանների գնման վկայագրերի տրամադրման>> ծրագրում:

2006-2009թ. ընթացքում բնակարանի գնման վկայագիր է տրամադրվել 426 ընտանիքի, որից բնակարան են ձեռք բերել 318 ընտանիքներ:

Բնակարանի կարիք ունեն ժամանակավոր կացարաններում բնակվող 95 փախստական ընտանիքներ:

<<Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում>> ծրագրով մարզում գործում է 5 մանկապատանեկան ճամբարներ, որտեղ իրենց ամառային հանգիստն են անցկացրել զոհված ու վիրավոր ազատամարտիկների, աշխարհազորայինների և կարիքավոր ընտանիքների 4500 երեխաներ՝ երեք հերթափոխով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ

I. Տեղական ինքնակառավարում Համայնքային ծառայություն

Մարզն ունի 42 համայնք, որոնցից 6-ը խոշորացված:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով մարզի 42 համայնքապետարանների աշխատակազմերի պաշտոնների անվանացանկերով հաստատվել է համայնքային ծառայության 495 պաշտոն:

II.Վարչական հսկողություն

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի <<Վարչական հսկողության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> N 5-Ա հրամանի համաձայն նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն՝ մարզի 24 համայնքների ղեկավարների և ավագանիների 2014-2017թթ. գործունեության նկատմամբ:

Հսկողության արձանագրությունները սահմանված կարգով տրվել են համայնքների ղեկավարներին և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Կատարվել են վարչական հսկողության արդյունքների քննարկումներ, այդ թվում մարզի խորհրդի նիստում:

Համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

Վարչական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների շտկման նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվությունները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Վարչական հսկողության արդյունքները հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

2018 թվականի ընթացքում մարզի 14 համայնքներում իրականացվելու է վարչական հսկողություն՝ համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ, որոնց արձանագրությունները ևս առաքվելու են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվելու են մարզպետարանի կայքում:

III. Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառ

Մարզպետի 17.01.2017թ. N 1-Ա որոշմամբ հաստատված <<ՀՀ Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանով>> նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրականացվել են:

Մարզը մասնակցել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության կողմից անցկացված 1 հրամանատարաշտաբային ուսումնավարժության:

Մարզում ՔՊ ծառայությունների հետ անցկացվել է 2 շտաբային, 1 ցուցադրական հատուկ տակտիկական, 5 հատուկ տակտիկական ուսումնավարժություն և 2 օբյեկտային վարժանք:

Մարզի 30 համայնքներում անցկացվել է շտաբային ուսումնավարժություն:

Մարզպետարանի և մարզային փրկարարական վարչության կողմից անցկացվել է քաղաքացիական պաշտպանության օրվա կապակցությամբ 7 և ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ 5 հատուկ տակտիկական ուսումնավարժություն, մարզի 8 դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են օբյեկտային վարժանքներ, 20 կազմակերպություններում՝ հատուկ տակտիկական ուսումնավարժություն, իսկ 60 ուսումնական հաստատություններում՝ դասախոսություններ:

Մարզային ՔՊ ծառայությունների շտաբների պետերի հետ անցկացվել է հրամանատարական պատրաստության 3 պարապմունք:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2017թ. հողային հաշվեկշռի համաձայն մարզում առկա են 154549,9 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որոնք կազմում են հանրապետական նմանատիպ հողերի 7,56 տոկոսը,այդ թվում վարելահողեր՝ 37680,0 հա, բազմամյա տնկարկներ՝ 2867,6 հա, խոտհարքներ՝ 11256,9 հա, արոտներ՝ 78878,4 հա: Նշված տարածքներից պետական և համայնքային սեփականություն են համարվում 7548,6 հա վարելահող, 2901,3 հա խոտհարք, 81,1 հա բազմամյա տնկարկ և 75751,2 հա արոտ:

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով մարզպետարանի կողմից ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 23 համայնքներում: Միաժամանակ՝ 2017 թ. մայիս-հունիս ամիսներին մարզպետարանի հողաշինության բաժնում տեսչական ստուգումներ են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից, որի արդյունքում բաժնի աշխատանքներում թերություններ և խախտումներ չեն հայտնաբերվել:

Մարզային հողային պետական տեսչության առաջնահերթ նպատակն է համարվում հողային օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելումը, համայնքների ղեկավարներին մեթոդական աջակցություն ցուցաբերելը և այլն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Նախորդ տարվա համեմատ 2017 թվականին շուրջ 30 %-ով ավել են հավաքագրվել մարզի համայնքների բյուջեների ընդամենը սեփական եկամուտները. 2016 թվականի 2 մլրդ 421 մլն դրամի դիմաց հավաքագրվել է շուրջ 3 մլրդ 164 մլն դրամ:

2018 թվականին ընդամենը սեփական եկամուտների հատվածում պլանավորվել է հավաքագրել 3 մլրդ 700 մլն դրամ, որը 2017 թվականի նկատմամբ ավել է շուրջ 500 մլն դրամով: 2018 թվականին մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը կազմելու է 14700 դրամ՝ 2017 թվականի 12500 դրամի դիմաց, իսկ 6 հարկատեսակների գծով մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը կկազմի 11600 դրամ՝ նախորդ տարվա 9500-ի փոխարեն:

Բյուջեների կազմման մեթոդաբանության շրջանակներում համայնքների ղեկավարներին առաջարկվել է վերանայել սոցիալական նպաստներին տրամադրվող գումարների ծավալը, որի արդյունքում 2018 թվականին պլանավորվել է շուրջ 42 %-ով պակաս գումար նախորդ տարվա նկատմամբ:

Աղբահանության գումարների հավաքագրումը 2016 թվականին կազմել է շուրջ 348 մլն դրամ, 2017 թվականին 407 մլն դրամ, իսկ 2018 թվականին պլանավորվել է շուրջ 558 մլն դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավել է գրեթե 37 %-ով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են 31679 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: 2017թ. բերքի տակ կատարվել է 18968 հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք /որից՝ աշնանացան- 5314 հա, գարնանացան- 13654 հա/:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է շուրջ 85.1 մլրդ դրամ, նախորդ տարվա 59.4 մլրդ. դրամի դիաց, կամ աճը կազմում է 30 %:

2017թ.-ի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 283 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 74.8 տ. գարնանացան գարու, 0.218 տ առվույտի, 3.5 տ գարնանացան ցորենի, 40.26 տ կորնգանի. 0.584 տ սիսեռի, 0.05 տ եգիպտացորենի սերմացուներ, որոնցով կատարվել է համապատասխանաբար՝ 374 հա գարու, 18.72 հա առվույտի,14 հա գարնանացան ցորենի, 36 հա կորնգանի, 4.5 հա սիսեռի, 2 հա եգիպտացորենի ցանք (պահանջարկը բավարարվել է):

Պետական աջակցության ծրագրերով 2017թ.-ին մարզին հատկացվել և ներկրվել է.

- ազոտական պարարտանյութ – 1900 տոննա (ներկրվել է 1856.75 տոննա, հավաքագրվել է 222.8 մլն. դրամ, պարտք չկա)
- կալիումական պարարտանյութ – 81.5 տոննա (ներկրվել է 30.8 տոննա – հավաքագրվել է 4326000 դրամ, պարտք չկա)
- ֆոսֆորական պարարտանյութ – 66 տոննա (ներկրվել է 30.7 տոննա – հավաքագրվել է 4298000 դրամ, պարտք չկա)

Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է, ծրագրից օգտվել են մարզի 57 համայնքների շուրջ 6001 շահառուներ:

Արտադրվել է 27036 տոննա հացահատիկ, 22807 տոննա կարտոֆիլ, 25089 տոննա բանջարեղեն, 73152 տոննա պտուղ և հատապտուղ, 1096 տոննա խաղող, 1500 տոննա սունկ, 250 տոննա մեղր, կուտակվել է 43000 տոննա խոտ, 7000 տոննա ծղոտ, ջերմատնային տնտեսություններում արտադրվել է բանջարեղեն և հատապտուղ՝ 6846 տոննա, ծաղիկ՝ 15 միլիոն հատ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում գարնանը մարզի 45 համայնքներին հատկացվել է 1110.88կգ <<Ռոդիֆակում- Ս>> մկնասպան թունանյութ. 13886 հա-ի վրա կատարվել են պայքարի աշխատանքներ մկնանման կրծողների դեմ:

Մարզում առկա է 2980 հա պտղատու այգի, որից 912 հեկտար ինտենսիվ, որոնցից 226 հեկտարը հիմնվել է վերջին նորագույն տեխնոլոգիաներով /հակակարկտային ցանց, կաթիլային ոռոգում և այլն/: Ի դեպ վերջին նորագույն տեխնոլոգիաներով այգիներից 26 հեկտարը հիմնվել է 2016 թվականին, իսկ 200 հեկտարը՝ 2017 թվականին: Ընթացիկ տարում նախատեսվում է հիմնել 225 հա պտղատու այգիներ /կաթիլային ոռոգում, հակակարկտային ցանց/:

Մարզում դրական տեղաշարժերից առանձապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի արտադրության ավելացումը: Ընդհանուր առմամբ ջերմոցների տարածքը 2017 թվականին կազմել է 81.4 հա, որից բանջարեղենի արտադրություն՝ 34.15 հա /Ձորաղբյուր, Նոր Գեղի, Արամուս/, ծաղիկի արտադրություն՝ 39.22 հա /Գողթ, Մայակովսկի/, ելակի արտադրություն՝ 8 հա /Նոր Գեղի, Ակունք/: Ընթացիկ տարում նախատեսվում է ջերմոցային տնտեսությունների թիվը ավելացնել 34 հա-ով: Պարբերական աճի միտում է նկատվում նաև տեխնիկական մշակաբույսերի (կտավատ, ծխախոտ) ցանքերի հատվածում:

Մարզում գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի շուրջ 7.8%-ը (53.6 հազ. գլուխ խ.ե.կ., որից 23.8 հազ.՝ կովեր), ոչխարների և այծերի՝ 5.8%-ը (40.1 հազար գլուխ) և խոզերի՝ 10.1%-ը (20.3 հազ. գլուխ):

2017 թվականին արտադրվել է 19.0 հազար տոննա միս (կենդանի զանգվածով), ինչը նախորդ տարվա համեմատ կազմում է 104.4 %: Կաթի արտադրության ծավալը կազմել է 69.2 հազար տոննա, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 1.6 %, արտադրվել է նաև 125.7 մլն. հատ ձու:

Մարզում լուրջ առաջընթաց կա գործող անասնապահական մթերքների արտադրության վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության բնագավառում, որոնց տեխնիկական հագեցվածությունը տարեցտարի ավելանում և համապատասխանեցվում է միջազգային ստանդարտներին: Արտադրանքի աճի հետ մեկտեղ զգալի աշխատանքներ են տարվել որակյալ և մրցունակ ապրանքների արտադրության ուղղությամբ՝ մարզի մի շարք ընկերությունների որոշ ապրանքատեսակներ արտահանվում և հաջողությամբ իրացվում են արտերկրում:

Առկա է և գործում է 4 սառնարանային տնտեսություն՝ 11000 տոննա տարողությամբ, ընթացիկ տարում նախատեսվում է կառուցել 2 հատ սառնարանային տնտեսություն 14000 տոննա տարողությամբ՝ Քարաշամբ և Քանաքեռավան համայնքներում:

2018 թվականին նախատեսվում է սպանդանոցների, գյուղատնտեսական տեխնիկայի, տոհմային տնտեսությունների, ոռոգվող վարելահողերի, ինչպես նաև փոքր, միջին և խոշոր գյուղացիական տնտեսությունների թվի աճ:

2017 թվականին ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում Զառ, Պռոշյան, Զորավան, Արզական, Սոլակ, Հրազդան համայնքների շահառուների կողմից ձեռք է բերվել 8 միավոր գյուղատնտեսական տեխնիկա (<<Բելառուս>> անիվավոր տրակտոր) և 10 միավոր գյուղգործիք (խոտհնձիչ, սրսկիչ, հողաֆրեզ, քարհավաք):

Գյուղտեխնիկայի ձեռք բերման ուղղությամբ 2017թ. մարզի տնտեսությունները օգտվեցին ընձեռնված հնարավորություններից: Ծրագրին մասնակիցների կողմից ձեռք բերված տեխնիկայի գումարային արտահայտությամբ մարզը հանրապետությունում 2-րդն է:

Մարզպետարանի կողմից համապատասխան աշխատանքներ են տարվում ծրագրից օգտվողների թիվը ավելացնելու ուղղությամբ, քանի որ այն լավագույն տարբերակներից է մարզում գործող տեխնիկական պարկը նորացնելու և համապատասխանաբար գյուղատնտեսական աշխատանքները ագրոտեխնիկական ժամկետներում իրականացնելու համար:

2017թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից օգտվելու համար Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն է ներկայացվել 629 հայտ, դասընթացներին մասնակցել են 403 և հավաստագիր են ստացել 384 շահառուներ:

<<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում կայացած հանրապետական և մարզային շաբաթօրյակների ընթացքում մարզում կատարվեցին համապատասխան աշխատանքներ:

Իրականացվել են 184 աղբավայրերի հաշվառմանն ու փակմանն ուղղված աշխատանքներ: Արդյունքում 2017 թվականին փակվել են 165-ը, իսկ 9-ի փակման աշխատանքները կիրականացվեն ընթացիկ տարում:

Դեռևս գործող 10 աղբավայրերը կփակվեն Հրազդան քաղաքում նոր կառուցվող աղբավայրի շահագործման արդյունքում:

Մարզում իրավաբանական անձանց հետ 2016 թվականին կնքվել է 1650 պայմանագիր, 2017 թվականի ընթացքում պայմանագրերի թիվը աճել է 143 տոկոսով՝ հասնելով 4005-ի, որը 2018 թվականին ևս կավելանա:

2017 թվականին գյուղատնտեսության ոլորտում կատարվել է 5 մլրդ 864 մլն դրամի ներդրում (2018թ.-ին նախատեսվում է ներդնել 5 մլրդ 867.2 մլն դրամ) և բացվել է 400 նոր աշխատատեղ (2018 թ.-ին նախատեսվում է բացել – 450 նոր աշխատատեղ):

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ և ԱԾԽՄ թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 114 անձինք, ԱԾԽՄ երեխաներ են 77-ը (նրանցից 11-ը հաշվառվել են 2017թ. ընթացքում), իսկ ԱԾԽՄ թվին պատկանող՝ 37-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատուն է տեղավորվել 3 երեխա, մանկատնից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 1 երեխա:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 58 երեխաների տրվել են վկայագրեր:

2017թ. <<Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ-ներ են տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքների 13 երեխաներ, նրանց տրվել են համապատասխան եզրակացություններ, կարիքների գնահատման հիման վրա կազմվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր, իսկ 25 երեխաներ համապատասխան եզրակացությունների հիման վրա դուրս են գրվել խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններից:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ 2017թ. ընթացքում մուտքագրվել է 93 երեխաների և երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների տվյալներ՝ այդ թվում 82 ԿԴԻՀ երեխաներ և երեխա որդեգրել ցանկացող 11 քաղաքացիներ: